ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 340- Ա **17 դեկտեմբերի 2018 թ**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի և 19 -րդ հոդվածի դրույթներով

կարգադրում եմ՝

1. Համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2018 թվականի նոյեմբերի 30-ի 03/15.1/9501-18 հանձնարարականի և Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության ծրագրի՝ 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի բոլոր տնտեսություններում և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններում առկա անասունների համատարած հաշվառումը կազմակերպելու և իրականացնելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Համբարձումյան Հ. - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ, հանձնաժողովի նախագահ

Բաղալյան Հ. - ՀՀ ազգային՝վիճակագրական ծառայության Գեղարքունիքի մարզային գործակալության տնօրեն /համաձայնությամբ/

Ավագյան Ս. - << Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի կենտրոն>> ՊՈԱԿ-ի Գեղարքունիքի մասնաճյուղի տնօրեն /համաձայնությամբ/

Մելքոնյան Ս. - ՀՀ գյուղատնտեսության զարգացման մարզային հիմնադրամի ղեկավար /համաձայնությամբ/

Հանձնաժողովի կազմում ընդգրկել մարզի համապատասխան համայնքների ղեկավարներին /համաձայնությամբ/:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի տարածաշրջաններում անասունների համատարած հաշվառումը կազմակերպելու պատասխանատվությունն ըստ տարածաշրջանների դնել մարզպետարանի աշխատակազմի ներքոհիշյալ մասնագետների վրա՝

Շահբազյան Հ. - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի տեղակալ, Ճամբարակի տարածաշրջան

Պետրոսյան Մ. - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի վարիչ, Վարդենիսի տարածաշրջան

Բաղեյան Ռ. - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ, Մարտունու տարածաշրջան

Մարգարյան Գ. - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ, Սևանի տարածաշրջան

Ջրաղացպանյան Ա. - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ, Գավառի տարածաշրջան

3.Հանձնաժողովին՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի տարածաշրջաններում անասունների գլխաքանակի հաշվառման աշխատանքներն իրականացնել 2019 թվականի հունվարի 1-18-ը:

4.Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Անուշավան Ղազարյանին:

5.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ք. Գավառ